# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈՒԼԻՍԻ 2014թվականի N 30-Ա

### ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով սեփականատեր Վլադիմիր Գրինչուկի 2014 թվականի հունիսի 30-ի դիմումը. *որոշում եմ՝*

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքում Վլադիմիր Գրինչուկին պատկանող 0.032 հա հողամասին՝ համաձայն <<Գեոդեզիա և քարտեզագրություն>> ՊՈԱԿ-ի կողմից տրված հողամասի հատակագծի, տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Տիգրան Մեծի փողոց թիվ 23:

2. Արմավիրի մարզի Փարաքար համայնքում Վլադիմիր Գրինչուկին պատկանող 0.032 հա հողամասին՝ համաձայն <<Գեոդեզիա և քարտեզագրություն>> ՊՈԱԿ-ի կողմից տրված հողամասի հատակագծի, տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Տիգրան Մեծի փողոց թիվ 23/1:

3.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 14թ. հուլիսի 01
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈՒԼԻՍԻ 2014թվականի N 31-Ա

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով գույքի բաժանման մասին 2014 թվականի հունիսի քսանչորսի պայմանագիրը. *որոշում եմ՝*

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքում Քիշմիշ Լևոնի Գասպարյանին, Արամայիս Սարգսի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող 0.056 հա հողամասին և 157.1 քմ մակերեսով շինություններին՝ համաձայն <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի, տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Կոմունայի փողոց տուն 28:

2.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 14 թ. հուլիս 01

գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈՒԼԻՍԻ 2014թվականի N 32-Ա

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով գույքի բաժանման մասին 2014 թվականի հունիսի քսանչորսի պայմանագիրը. *որոշում եմ՝*

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքում Արտավազդ Սարգսի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող 0.056 հա հողամասին և 140.2 քմ մակերեսով շինություններին՝ համաձայն <<Կարեն Մաչանյան>> ԱՁ -ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի, տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Կոմունայի փողոց տուն 28/1:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 14թ. հունիսի 01
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈՒԼԻՍԻ 2014թվականի N 33-Ա

## ՎԼԱԴԻՄԻՐ ԳՐԻՆՉՈՒԿԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով գույքի բաժանման մասին 2014 թվականի հուլիսի մեկի պայմանագիրը. *որոշում եմ*՝

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքում Վլադիմիր Գրինչուկին պատկանող 0.032 հա հողամասին՝ համաձայն <<Գեոդեզիան քարտեզագրություն>> ՊՈԱԿ-ի կողմից տրված հողամասի հատակագծի, տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղթաիրով, Տիգրան Մեծի փողոց թիվ 23:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 14 թ. հուլիս 02
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈՒԼԻՍԻ 2014թվականի N 34-Ա

## ԵԿԱՏԵՐԻՆԱ ՄԱԿՇԱՆՈՎԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով գույքի բաժանման մասին 2014 թվականի հուլիսի մեկի պայմանագիրը. *որոշում եմ՝*

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքում Եկատերինա Մակշանովային պատկանող 0.032 հա հողամասին՝ համաձայն <<Գեոդեզիան քարտեզագրություն>> ՊՈԱԿ-ի կողմից տրված հողամասի հատակագծի, տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Ե. Քոչարի փողոց 2-րդ փակուղի թիվ 3:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակաեն գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 14թ. հուլիս 02
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
1149, Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար, Նաիրիի փողոց 42 ☎ 060 530042, E-mail paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հուլիսի 2014 թվական N 35

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. **Փարաքար համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

<<Ջուլիաննա>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2014 թվականի հունիսի 25-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետի հիմքով Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. **Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Համաձայն Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի կողմից տրամադրված <Գույքահարկի մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի կողմից տրամադրված շենքերի և շինությունների հաշվառման և գնահատման տվյալների՝ քննարկվող անշարժ գույքը՝ Ամավիրի մարզ, գյուղ Թաիրով, Մայրաքաղաքային փողոց 206 և 208, հանդիսանում է <<Ջուլիաննա>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականությունը, ինչը <Գույքահարկի մասին> ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 1.147.952 ՀՀ դրամ, ինչը 2008 -2013 թթ. ընկած ժամանակահատվածում չի վճարվել:

<<Ջուլիաննա>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նշված ժամանակահատվածի համար գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 702 189 ՀՀ դրամի չափով:

2014 թվականի հունիսի 25-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2014 թվականի հուլիսի 7-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ փոստային ծանուցագիր AR145538441AM/ <<Ջուլիաննա>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: Վերջինիս տնօրեն Աշոտ Արայի Մուրադյանը ներկայացել է վարչական վարույթի լսումներին:

3. **Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության

գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝

1) համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե.

Համաձայն <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 2.2-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես պարտադիր լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը:

Համաձայն <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 29.1-ին հոդվածի 1-ին մասի՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի, <Գույքահարկի մասին> ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ, <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 29.1-ին, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

## ՈՐՈՇԵՑԻ

1. <<Ջուլիաննա>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հօգուտ Փարաքար համայնքի բյուջե գանձել 1 850 141 ՀՀ դրամ, որից 1 147 952 ՀՀ դրամ որպես շինության համար վճարման ենթակա գույքահարկի գումար, 702 189 ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում բողոքարկվել վարչական կարգով՝ Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014թ. հուլիսի 7

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2014թվականի N 36-Ա

### ԹԱՄԱՐԱ ԲԱԳՐԱՏԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի երրորդ մասով, 66-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և երկրորդ մասով, հիմք ընդունելով Թամարա Բագրատի Ավետիսյանի 2014 թվականի հունիսի 26-ի դիմումը. որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքում գտնվող Թամարա Բագրատի Ավետիսյանի սեփականությունը հանդիսացող 04-561-015-094 կադաստրային համարով գյուղատնտեսական նշանակության հողամասին կից 0.0051 հա վարձակալությամբ տրված հողամասը հողի կադաստրային արժեքով՝ 22848 /քսաներկու հազար ութ հարյուր քառասունութ/ դրամ, ուղղակի վաճառքով օտարել Թամարա Բագրատի Ավետիսյանին:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Էջմիածնի նոտարարական գրասենյակի կողմից 2002 թվականի դեկտեմբերի 6-ին վավերացված վարձակալության պայմանագիրը /սեղանամատյան թիվ 1/227/:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 14 թ. հուլիս 08
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հուլիսի 2014թվականի N 37-Ա

### ԱԿՏԻՎ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՉՈԲԱՆՅԱՆԻ ԵՎ ԿԱՐԵՆ ԱԿՏԻՎԻ ՉՈԲԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔԱՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ, <<Հաբշին նախագիծ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից 2014 թվականի հուլիսի 24-ին տրված բնակելի տան տեխնիկական վիճակի վերաբերյալ դրական եզրակացությունը և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք ,հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Զավեն Բաբայանի կողմից 2014 թվականի հունիսի 14-ին տրված շինությունների բնութագիրը, հողամասի հատակագիծը և համասեփականատեր Կարեն Ակտիվի Չոբանյանի 2014 թվականի հուլիսի 29-ի դիմումը. *որոշում եմ՝*

1. Կարեն Ակտիվի Չոբանյանի և Ակտիվ Անդրանիկի Չոբանյանի կողմից իրենց սեփականության իրավունքով պատկանող 04-002-0143-0004 կադաստրային համարով 0.027 հա տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցած 77.62 քմ արտաքին մակերեսներով շինությունները ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառույցի օրինականացման վճարը՝ բնակելի տան, ձեղնահարկի և աստիճանավանդակի համար, 1 քմ-ն 2600 դրամ, կազմում է 77.62 x 2600 = 201812 դրամ (երկու հարյուր մեկ հազար ութ հարյուր տասներկու ) դրամ:
3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 - օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4.Տնամերձ հողամասի և բնակելի տան հասցեն թողնել անփոփոխ. Արմավիրի մարզ, գյուղ Թաիրով , Հ.Օրբելու փողոց 5-րդ նրբանցք տուն 2:
5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից:
6. Սույն որոշումնուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2014թվականի N 38-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Համայնքային ծառայության մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ և 14-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանով հաստատված թիվ 1 հավելվածի 8-րդ կետը. Որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-4/ համայնքային ծառայ ության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթն անցկացնել Փարաքարի գյուղապետարանի շենքում 2014 թվականի սեպտեմբերի 4-ին ժամը 12 [30]-ին :

2. Մրցույթի անցկացման վերաբերյալ հրապարակային ծանուցումը հրապարակել http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայք էջում :

3. Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով լիազորված անձ նշանակել գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Գայանե Մանուկյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 14 թ. հուլիսի 31
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2014թվականի N 39 - Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Համայնքային ծառայության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ և 19-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանով հաստատված թիվ 2 հավելվածի 8-րդ կետը. Որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ատեստավորում նշանակել և անցկացնել Փարաքարի գյուղապետարանի շենքում 2014 թվականի սեպտեմբերի 4-ին ժամը 13$^{30}$-ին, 14$^{30}$-ին, 15$^{30}$-ին՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով լիազորված անձ նշանակել գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Գայանե Մանուկյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 14 թ. հուլիս 31
գ.Փարաքար

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի

Փարաքարի գյուղական համայնքի

ղեկավարի 2014 թվականի հուլիսի 31

թիվ 39-Ա որոշման

# Ց Ո Ւ Ց Ա Կ

## ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ

1. Մարիետտա Արամի Քեյան

Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր 1.2 -1)

2. Սարիբեկ Օնիկի Օհանյան

Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի պետ (ծածկագիր 2.1-2)

3. Մարգո Միքաելի Մարգարյան

Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ (ծածկագիր 2.1-3)

4. Ժորա Բարեղամի Հարությունյան

Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի գլավոր մասնագետ

(ծածկագիր 2.3-3)

5. Վահան Ֆերդինանդի Մարգարյան

Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի

գլխավոր մասնագետ (ծածկագիր 2.3-2)

6. Անահիտ Վոլոդյայի Վարդանյան

Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ

( ծածկագիր 2.3-1)

7.Քնարիկ Հրանտի Գրիգորյան

Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի

առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-5)

8. Աշխեն Գառնիկի Գրիգորյան

Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի

առաջին կարգի մասնագետ (ծածկագիր 3.2-6)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

04 ՀՈՒԼԻՍԻ 2014թվականի N 27-Ա

ԳԵՂԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ, 169-րդ հոդվածներով, Փարաքարի գյուղական համայնքի ղեկավարի 2013 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 85-Ա կարգադրությամբ և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ղեկավարի 2014 թվականի փետրվարի 21-ի թիվ 7-Ա կարգադրությամբ հաստատված ժամանակացույցը. կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի խորհրդատու Գեղամ Գասպարյանին 2014 թվականի հուլիսի 14 -ից տրամադրել 2013 թվականի աշխատանքային տարվա իր չօգտագործած նվազագույն արձակուրդի մյուս մասը՝ 12 աշխատանքային օր:

2. Գեղամ Գասպարյանին աշխատանքի մեջ համարել 2014 թվականի հուլիսի 31- ից:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014թ. հուլիսի 04
գ.Փարաքար